

երկու տարբեր անձեր: Գալով թղթապատատին՝ երբեմն շատ սովորական էր ամուսնութեան վերաբերեալ շիշատակարաններու մէջ, և դամբարաններու բազմաթիւ քանդակներու մէջ եւս ամուսնոյն ձեռքին մէջ ներկայացուած կը գտնուի, և կը կարծուի իբր դաշինի ստեղծութեան: Արդ այս դաշինքը կրկնակ գերեզմանի մը խորհրդապատկերին վրայ դնելով՝ չի^օ թուիր նշանակել թէ ընկերակցութիւնը և փոխադարձ հաւատարմութիւնը տեւած են մինչև գերեզման» (Անդ. էջ 75-76):

1483 ին Ալիւրմանցի Նիկողայոս եպիսկոպոս՝ Երուսաղէմի ուխտատեղիներու իր ցուցակին մէջ հետեւելը կը գրէ. «Պրոպատիկէ աւագանն, որ կոչի երբայեցերէն սրահ, ուր անդամալոյծն բժշկեցաւ եւ գերեզմանն Աստուածածնի ծնողաց, Յովակիմայ եւ Աննայի, և ծնունդն Աստուածածնի»: Բայց այս կէտը հնախօսներուն մէջ տակաւին վիճելի է (Անդ. էջ նոյն):

Յովհաննէս եպիսկոպոս Երուսաղէմացի Ս. Կոյսի ծննդեան տեղը կը նկարագրէ հետեւեալ կերպով. «Որ ի հարաւակողմն կուսէ տեսաք գուռ մի փոքր, եւ ի նմանէ իջանի յայր մի որ է տեղի ծննդեան ամենամաքուր կուսին Սրբուհոյ Աստուածածնին ի յԱննայէ մօրէ իւրմէ. և ի նոյն կողմն գտանին խցիկք և խըրճիթք կրօնաւոր կուսանաց, յորում բնակէին ի ժամանակս խաղաղութեան...» (Հան. էջ 229):

9. Պրոպատիկէի եկեղեցիին մէջ աւանդական դէպք մը. — «Անագանոս մի յերուսաղէմ ի Պրոպատիկէն, տեսանէր գճէրն զի մտանէր ի տաճարն հանդերձ հրեշտակօք, որք ունէին զլպատերս շիջեալս, և ասէր Տէրն. մոռացան գերախտիսն իմ, վա՛յ քեզ